«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 47/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ • 02.07.2019թ. ժամը 17:15

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.06.2019թ-ին ստացված,քաղաքացի Հրանուշ Մելոյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով «Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Հուլիսի 02-ին,17-00-ին** ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը:
«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝քաղաքացի Հրանուշ Մելոյանը
«Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
«Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանի լիազոր ներկայացուցիչ՝Ժիրայր Սաֆարյանը
Դիմումատու՝ քաղաքացի Հրանուշ Մելոյանը:

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.06.2019թ-ին ստացված,քաղաքացի Հրանուշ Մելոյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով «Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը ստեգելով ներկաների լիազորությունները և անձը հաստատող փաստաթղթերը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ «Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանին Կարգապահական հանձնաժողովում ներկայացնում է լիազորված ներկայացուցիչ,ինչը սնանկության գործով կառավարչի որպես կարգապահական վարույթի մասնակցի իրավունքն է և համպատասխանում է «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 3.2 հոդվածի 1-ի մասին:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմում-բողոքը ներկայացնելու համար ծայնի իրավունք տվեց դիմումատու Հրանուշ Մելոյանին,ով հակիրճ ներկայացնելով դիմում բողոքը մասնավորապես նշեց,որ սնանկության գործով կառավարիչ Արման Սարգսյանի կողմից կեղծվել է իր իր ձեռագիրը և դատարան է ներկայացրել գրություն որի հիմքով Երևան քաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանը 07.11.2006թ-ին կասեցրել է թիվ 2-2951 քաղաքացիական գործը և խնդրում է տրամադրել կառավարչի բնակության հասցեն ու կանխել Ա.Սարգսյանի կողմից կատարվող առերևույթ անօրինական գործողությունները:Դիմումատուն ներկայացրեց նաև դիմումին կից իր ապացույցները 48 թերթից:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հարց ուղղեց դիմումատուին թե ինչի համար է նրան հարկավոր կառավարչի հասցեն,այսինքն ինչ գործառույթ կատարելու անհրաժեշտությունից է այդպիսի պահանջ ներկայացվում:

Դիմումատուն պատասխանեց,որ նրան նամակ է ուղում գրել և անձամբ էլ տանել հանձնել է ցանկանում,իսկ պատճառների վերաբերյալ ոչինչ չհայտնեց:

Կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց՝«Արմեն»ՍՊԸ-ի Արման Սարգսյանի ներկայացուցիչ Ժ.Սաֆարյանին, ով ներկայացրեց հանձնաժողովին Ա.Սարգսյանի գրավոր բացատրությունները և կից ապացույցները,մասնավորապես «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» Ոստիկանության Մաշտոցի բաժնի հետաքննության տեսուչ՝Ա.Ղանդիլյանի 19.11.2018թ-ի որոշումը:

Ներկայացուցիչը նշեց,որ դիմումատուի կողմից 15.10.2018թ-ին դիմումով դիմել է ՀՀ Վարչապետին,որով ըստ էության արծածվել է նույն փաստերը ինչը բողոքով ներյացրել է այս պարագայում:Հետաքննիչի կողմից ստուգվել են ներկայացրած փաստերը և դրանք ճշտվելով,չեն չհաստատվելով,որպիսի պատճառաբանությամբ էլ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Բացի դրանից ներկայացուցիչընշեց,որ ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են շուրջ 10 տարվա վաղեմություն ունեցող գործին,որի սնանկության վարույթը վաղուց ավարտվել է և Ա.Սարգսյանը չի հանդիսացել այդ գործի ավարտին մասնակից սնանկության գործով կառավարիչը,ուստի խնդրեց Կարգապահական վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հարցրեց կառավարչի ներկայացուցչին «Արմեն»ՍՊԸ-ի սնանկության վարույթի ավարտման փաստի առկայության վերաբերյալ:

Ներկայացուցիչը պատասխանեց,որ այդ ընկերության սնանկության գործով կառավարիչը սկզբից նշանակվել է Կարեն Հաբեշյանը,հետո նրան փոխարինել է Արման Սարգսյանը,կարճ ժամանակամիջոցով,իսկ Ա.Սարգսյանը նույնպես փոխարինվել է այլ կառավարչով,մինչև վարույթի 2008թ-ին ավարտը:

Ներկայացուցիչը նշեց նաև,որ ստանձնելով սնանկության գործերի վարույթներով ՍԳ կառավարչի պարտականություններըԱ.Սարգսյանի կողմից կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրացում,որը նրա կողմից կատարվել է բարեխղճորեն:

Հանձնաժողովի անդամ՝Հ.Ադամյանը հարց ուղղեց կառավարչի ներկայացուցչին առ այն,որ կառավրչի և դիմումատուի միջև եղել են արդյոք անձնական հանդիպումներ մինչև քննարկվող դեպքերը:

Ներկայացուցիչը պատասխանեց,որ այո հանդիպումներ եղել են վարույթի շրջանակներում մինչև 2006թ-ը և կառավարիչի հետ վիճաբանության և անպարկշտ վերաբերմունքից հետո հանդիպումներ չէն եղել,քանի որ Ա.Սարգսյանը արդեն այդ գործով ՍԳ կառավարչի պարտականություններից ազատվել է:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ համաձայն «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.12 հոդվածի.

-Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմք հայտնաբերվելուց հետո՝վեցամսյա ժամկետում,բայց ոչ ուշ,քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթը չի կարող հարուցվել,իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Քանի որ ներկայացված փաստական հանգամանքները վերաբերվում են շուրջ 10 տարի վաղեմության սնանկության գործին ուստի վերընշված հիմքով Հանձնաժողովի նախագահն առաջարկեց մերժել Կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 03.06.2019թ-ին ստացված,քաղաքացի Հրանուշ Մելոյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով «Արմեն»ՍՊ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝Արման Սարգսյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ կարգապահական վարույթի հարուցումը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.12. հոդվածի հիմքով մերժել,ներկայացված դիմումը,բացատրությունները և կից փաստաթղթերը կցել գործին:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյան